ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ, ԾՐԱԳՐԵՐ, ՄՐՑՈՒՅԹՆԵՐ...

Միջազգային խորհրդաժողով՝ «Սովորենք Վրաստանում» ծրագրի թեմայով

Վրաց կրթական տարածքում օտարերկրյա քաղաքացիների առավելագույն ներգրավվածության նպատակով, ընթանում է միջազգային կրթական խորհրդաժողով՝ «Բարձրագույն կրթության միջազգայնացում եւ միջազգային վարկանշային համակարգեր» խորագրով: Այն անցկացվում է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության «Սովորենք Վրաստանում» ծրագրի շրջանակներում եւ նպաստում է Վրաստանի բարձրագույն կրթական հաստատությունների ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) զարգացմանն ու միջազգային ոլորտում երկրի ճանաչելիության բարձրացմանը:

Միջազգային վարկանիշները բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական որակի եւ հետազոտության ամենաամուր ու նշանակալի ցուցանիշն է, դրա համար էլ միջազգային վարկանիշներում վրացական համալսարանների ի հայտ գալն ու դիրքերի բարելավումը կարեւոր է Վրաստանի կրթական ներուժի, ճանաչելիության աճի համար:

Այդ պատճառով էլ, խորհրդաժողովին մասնակցում էին բարձրագույն կրթության բնագավառի առաջատար միջազգային վարկանիշային ընկերություններ, ինչպես՝ Times Higher Education - World University Rankings, U-Multirank, որոնք վրաց համալսարաններին ծանոթացնում են սեփական հաջողության հասնելու մեթոդաբանությանը եւ խորհրդատվություններ կտրամադրեն Վրաստանի համալսարանների ճանաչելիության բարձրացման նպատակով:

Հավաքին, բացի Վրաստանի բարձրագույն կրթական հաստատություններից ու հրավիրյալ հյուրերից, ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Թեյմուրազ Մուրղուլիան, Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ղեկավար Թամար Սանիկիձեն:

Հանուն ձեռներեցության ուսուցման զարգացման

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու Առեւտրաարդյունաբերական պալատի համագործակցությամբ, Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնում ավարտվեցին ձեռներեցության դասընթացավարների վերապատրաստման վարժանքները:

Այն վարում էին Գերմանիայից հրավիրված փորձագետներ: Դասընթացի նյութը մշակվել էր Բավարիայի առեւտրաարդյունաբերական պալատի կողմից եւ հաջողությամբ ներդրվել տարբեր երկրներում:

Ձեռներեցության հմտությունների զարգացումը մասնագիտական կրթության հիմնական բաղադրիչներից է: Այն պետք է նպաստի ուսանողների՝ ինչպես աշխատաշուկայում հաստատվելուն, այնպես էլ՝ սեփական բիզնես նախաձեռնելու եւ կառավարելու գործին: Հետեւաբար, միջազգային չափանիշներով դասընթացավարների վերապատրաստումն առանձնահատուկ նշանակություն ունի ապագա հաջողությունների համար:

Մասնակիցներին, որոնք հաջողությամբ են անցել նշյալ վարժանքները, կտրվեն միջազգային հավաստագրեր: Ձեռնարկը կազմակերպել էր Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության մասնագիտական կրթության զարգացման վարչությունը:

Ալեքսանդրե Ջեջելավան այցելեց վերանորոգված դպրոց

Փոխվարչապետ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդրե Ջեջելավան այցելեց Կասպիի մունիցիպալիտետի Կավթիսխեւիի հանրային դպրոց: Այն լրիվությամբ վերանորոգվել է Ամերիկայի ֆինանսական օգնությամբ:

Կավթիսխեւիի 200 աշակերտի համար նախատեսված հանրային դպրոցը ապահովված է անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով եւ լրիվությամբ բավարարում է ժամանակակից պահանջներին:

ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ, «Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամ-Վրաստան»-ի կողմից մինչեւ տարեվերջ լրիվությամբ կվերանորոգվի 54 հանրային դպրոց: 2019 թվականի համար, միայն նշյալ հիմնադրամի կողմից, լրիվությամբ վերանորոգված ու ժամանակակից սարքավորումներով հագեցված կլինի 100 դպրոց:

Վրաց փորձագետները կգնահատեն միջազգային մրցույթի մասնակիցներին

Հոկտեմբերի 14-19-ը Աբու-Դաբիշ քաղաքում կայացավ մասնագիտական հմտությունների (Worldcomills) 44-րդ միջազգային մրցույթը, որին Վրաստանն արդեն երրորդ անգամ է մասնակցում, եւ յոթ մասնագիտական ուղղություններով ներկայացրեց իր ներկայացուցիչներին: Այս մասին InterPressNews-ին հաղորդեց կրթության եւ գիտության նախարարությունը: Ըստ այդ տեղեկության, մինչեւ մեկնելը, Worldskills Georgia թիմի անդամներն ու նրանց ուսուցիչները, Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի օգնությամբ, պատրաստման երկարատեւ փուլ ու վարժանքային մոդուլ են անցել: Նրանց արհեստավարժությունը Worldskills-ի կազմակերպիչների կողմից բարձրագույն միավորներով է գնահատվել եւ ներկայացվել Worldskills-ի բազայում:

Worldskills Georgia-ի թիմի անդամներին եւ նրանց ուսուցիչներին հանդիպեց Որակավորման կենտրոնի տնօրեն Թամար Սանիկիձեն եւ Worldskills Access ծրագրի ուսուցիչներին հատուկ հավաստագրեր հանձնեց հաջողություններ գրանցելու համար, ըստ որի նրանց միջազգային փորձագետների կարգավիճակ շնորհվեց: Այս փաստաթղթով, ուսուցիչները հանարավորություն ունեցան գնահատել մրցույթի մասնակից մոտ 80 երկրի ներկայացուցչի, նաեւ պատրաստել՝ մասնակից թիմի անդամներին:

WorldSkills Georgia-ն Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի համատեղ նախագիծն է, որի նպատակը Վրաստանում մասնագիտական կրթության մասսայականացումը, որակի բարելավումը, միջազգային չափանիշներին մոտեցումն ու միջազգայնացումն է: 2012 թվականից Վրաստանը, ի դեմս Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի, WorldSkills International անդամ է ու ամեն տարի մուծում է անդամության հարկ: Այս փուլում WorldSkills International-ը միավորում է 77 երկիր: WorldSkills-ի լայնածավալ մրցույթները երկրում անցկացնում է որեւէ անդամ՝ երկու տարին մեկ: Մրցույթը տեւում է չորս օր, մասնակիցները մինչեւ 22 տարեկան են: «Մասնագիտական հմտություններ դրսեւորելու եւ զարգացնելու համար WorldSkills-ը հրաշալի հարթակ է»,- նշված է նախարարության հաղորդագրության մեջ:

Պատրաստեց՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ԿԼԻՆԻ ԱԿՏՈՒԱԼ

Մարդկության պատմության ողջ ընթացքում ստեղծվել ու անհետացել են տարբեր արհեստներ, մասնագիտություններ: Դրանցից մի քանիսը զարգացան ու մնացին ընդմիշտ. այսօր դրանց թիվը մոտ 40 հազարի է հասնում: Ի՞նչ կարելի է ասել այսօր գրադարանավարի մասնագիտության մասին:

Լուսավորյալ ժողովուրդների մոտ գրքի պահապանը միշտ եղել է հարգված: Թբիլիսիում մենք ունենք Կոռնելիա Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտ: Այսօր ամենուր խոսվում է գրքի անտեսվածության մասին, որ հատկապես երիտասարդության շրջանում գերադասվում են առօրյա կենցաղ մտած ժամանակակից տեխնիկայի էլեկտրական նոր հարմարանքները, որոնք հեշտացնում են ժամանակակից մարդու կյանքը: Մի՞թե ապագայում կանհետանա գրքի ավանդական հրատարակչությունը, նրա հետ էլ՝ գրադարանավարի մասնագիտությունը...

Երեւի չկա մարդ, ով տարեց հասակում չհիշի իր դպրոցի ուսուցիչներից որեւէ մեկին: Շատե՞րն են հիշում իրենց դպրոցի գրադարանավարին: Տեղին է նշել, որ Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում մինչ օրս հիշում են դպրոցի գրադարանի բազմամյա ծառայող Օֆելյա Ներսիսյանին, ով ավելի քան հիսուն տարի մեծագույն նվիրումով կատարեց գրադարանավարի գործը: Հուսով ենք՝ այս դպրոցի սաները նույն բարի խոսքով կհիշեն նաեւ դպրոցի ներկայիս գրադարանավարուհի Հասմիկ Անտոնյանին:

Հասմիկը երբեք ձեռնծալ չի նստում, նա ոչ միայն գրքեր է փոխանակում... Նրա համար երեխաների հետ աշխատանքը պարզապես հետաքրքիր է: Ավելին՝ բարձր դասարանցիները նրանից խորհուրդներ են ստանում՝ ի՞նչ եւ ինչի՞ մասին կարդալ, քննարկում կարդացածը, ունեն իրենց տեսակետը: Իսկ առաջին եւ փոքր-ինչ բարձր դասարանցիները տիկին Հասմիկից ստանում են ոչ միայն Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, մյուս նշանավոր հեղինակների գրքերը, այլեւ պարտադիր կարգով ու նրա պահանջով պատմում իրենց կարդացածը: Ու եթե որեւէ մեկին չի հաջողվում կարդացածը սահուն պատմել, ապա Հասմիկը համբերատարությամբ պատմողին օգնում է իմաստավորել անհասկանալիին: Երբեմն էլ պահանջում է նորից ընթերցել՝ «սպառնալով», հակառակ դեպքում, ընթերցելու գիրք չտալ:

Դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը հավաստում է, որ երեխաներին ոչ ոք չի ստիպում գնալ գրադարան, որ նրանք իրենց կամքով են գալիս գիրք վերցնելու, անկախ այն հանգամանքից, որ դպրոցի մանկավարժների կողմից ամեն կերպ խրախուսվում է արտադասարանական ընթերցանությունը:

Տիկին Հասմիկը գրադարանում հաճախ կազմակերպում է գրական ասուլիսներ, հանդիպումներ գրական գործիչների հետ: Վերջերս նա բարձր դասարանցիներին հանձնարարեց կարդալ Արտեմ Գրիգորենցի «Անտրեպրիզա ատաշայի համար» կատակերգությունը, ապա, գրադարանում նրանց հետ մեկտեղ, քննարկվեց դրամատիկական այդ գործը: Գրական դիսկուսիային ներկա էր պիեսի՝ ռուսերենից հայերեն թարգմանող հեղինակը՝ Մելիքսեթ (Էդիկ) Հակոբյանը, ով նաեւ դպրոցի տնտեսական գծով տնօրենի տեղակալն է: Գրադարանավարուհին հմտորեն վարեց այդ քննարկումը, որն առնչվեց ոչ միայն կոնկրետ պիեսին, այլ նաեւ այսօրվա ցավոտ թեմաներից մեկին՝ ստեղծագործող երիտասարդության սերնդափոխությանը, այդ ճանապարհին ծագած խնդիրներին, ընդհանրապես՝ թատերական արվեստին, դրամատիկական ստեղծագործության ռեժիսորական ու դերասանական մեկնաբանություններին եւ այն գրական ստեղծագործություններին, որոնցում ներդրված են հավերժական թեմաներ: Բայց այսօր այնքան էլ դյուրին չէ երիտասարդ սերնդին կողմնորոշել համացանցի գրական օվկիանոսում: Իրազեկել այն մասին, թե ինչպես տարբերել հասուն գործը սիրողականից, բարձրաճաշակը՝ անճաշակությունից, մանավանդ որ, հեռավոր ապագայում հնարավոր է՝ լինի էլեկտրոնային հրատարակչություն: Այս առումով, ահա, առաջին պլան է մղվում ընդհանրապես դպրոցի եւ դպրոցի գրադարանավարի դերակատարությունը: Ասել է՝ գրադարանավարի մասնագիտությունը նույնիսկ կդառնա ավելի արդիական, ավելի գործուն նշանակություն ունեցող, քանի որ լոցմանի (նավատար) դերը՝ գրական բազմազանությամբ հեղեղված օվկիանոսի մեջ, խիստ կարեւոր է եւ անհրաժեշտ:

ԱՐՍԵՆ ԲԱՐԱԿԱՋՅԱՆ

Նկարում.- Հասմիկ Անտոնյանը (կենտրոնում)՝ նախկին 12-րդ դասարանի աշակերտների հետ

2017 թվականի հոկտեմբերի 21-ին անց են կացվում Մունիցիպալիտետի սակրեբուլոյի (ավագանու) և ինքնակառավարվող քաղաքի/համայնքի քաղաքապետի ընտրություններ

ՑԵՍԿՈ
ՍԱՔԱՐՏՎԵԼՈՅՍ ՍԱԱՐՀԵՎՆՈ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ

Ի՛ ուշադրություն ընտրողների.

Քվեարկության օրը ընտրական տեղամասում Ձեզ կփոխանցվեն քվեաթերթիկներ

- սակրեբուլոյի համամասնական ընտրությունների համար (կուսակցությունների, խմբակցությունների ցուցակ)
- սակրեբուլոյի մեծամասնական ընտրությունների համար (մեծամասնական թեկնածուների ցուցակ)
- քաղաքապետի/համայնքապետի ընտրությունների համար (քաղաքապետի/համայնքապետի թեկնածուների ցուցակ)

Յուրաքանչյուր քվեաթերթիկում Դուք պետք է շրջագծեք Ձեզ համար ցանկալի ընտրական սուբյեկտի հերթական համարը:

Քվեարկությունն անց է կացվում ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ն:

Քվեարկության շենք մտնելիս՝ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և նրա մոտ անցե՛ք նշմարման ստուգման ընթացակարգ:

Եթե պարզվի, որ ունեք նշմարում, Ձեզ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո, գնացե՛ք գրանցման սեղանի մոտ և ընտրողների գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:

Անցե՛ք նշմարում:

Նշմարման ընթացակարգն անցնելուց հրաժարվելու դեպքում՝ Ձեզ թույլ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Ընտրողների ցուցակում ստորագրե՛ք Ձեր ազգանվան երկայնքով:

Ընտրողների գրանցում իրականացնողից ստացե՛ք կնիքով և ստորագրությամբ վավերացված ընտրական քվեաթերթիկները:

Քվեախցիկում շրջագծե՛ք Ձեզ համար ցանկալի մեկ ընտրական սուբյեկտի հերթական համարը:

Եթե ինքնուրույն չեք կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք օգնելու համար քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի ու դիտորդի:

Եթե վնասել եք քվեաթերթիկը, դիմե՛ք ընտրական հանձնաժողովի նախագահին, փոխանցե՛ք վնասվածը և պահանջե՛ք նոր ընտրական քվեաթերթիկ:

Քվեախցիկից դուրս գալուց հետո, վերցրե՛ք հատուկ ծրարը և ծալված ընտրական քվեաթերթիկները զետեղե՛ք դրա մեջ:

Հատուկ ծրարը գցե՛ք քվեատուփի մեջ:

Քվեարկությանը մասնակցելուց հետո հեռացե՛ք ընտրական տեղամասից:



ՍԱԱՐՀԵՎՆՈ ՍԻՍՏԵՄԵԲԻՆ ԳԱՆՎԻՏԱՐԵԲԻՆ, ՌԵՖՈՐՄԵԲԻՆՍԱ ԵՎ ՍՎԱՎԼԵԲԻՆ ՑԵՆՏՐՈՆ

Աշխատում ենք քեզ համար

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՈՉԻՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին աշխատանքային այցով Սոչիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին:

Նիստին մասնակցեցին նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահները, Ղրղզստանի վարչապետը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Խորհրդի նիստի օրակարգում նեառված են տեղեկատվայնացման, մաքսային կարգավորման, մրցակցության, բնական մենաշնորհների եւ արդյունաբերության ոլորտներում համագործակցության, ինչպես նաեւ միջազգային գործունեությանը վերաբերող հարցեր:

Նույն օրը Սոչիում կայացավ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նեղ կազմով նիստը, որին մասնակցել է աշխատանքային այցով Սոչիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստը նախագահել է հյուրընկալող երկրի նախագահ Վլադիմիր Պուտինը:

Նիստում քննարկվել են քաղաքական, տնտեսական, մշակութային-հումանիտար ոլորտներում եւ ԱՊՀ գործունեության այլ առանցքային ուղղություններով համագործակցության հետագա զարգացմանը վերաբերող հարցեր:

Ընդլայնված կազմով նիստում քննարկվել են տնտեսական, մշակութային-հումանիտար, պաշտպանական քաղաքականության, արտաքին սահմանների պահպանության, ահաբեկչության հակազդեցության ոլորտներում համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքներ, ինչպես նաեւ նոր իրողություններին ԱՊՀ-ի ադապտացիայի վերաբերյալ հարցեր:

ԸՆԴԳԾՎԵՑ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 10-ին պաշտոնական այցով Իրանում գտնվող Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի նստավայրում, հանդիպում ունեցավ ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի հետ:

Հանդիպմանը Հասան Ռոհանին, համոզմունք հայտնեց, որ այցը կնպաստի տարբեր բնագավառներում հայ-իրանական բարեկամական հարաբերությունների հետագա խորացմանը:

Զրուցակիցները կարեւորեցին մի շարք ոլորտներում, մասնավորապես, էներգետիկ բնագավառի, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, «Սյունիք» եւ «Արաս» ազատ տնտեսական գոտիների համագործակցության խորացումն ու ընդլայնումը, երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալների ավելացումը:

Կողմերն անդրադարձան Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ու տարածաշրջանային խնդիրներին առնչվող հարցերին:

Այցի շրջանակներում, Հայաստանի կառավարության ղեկավարը Թեհրանում հանդիպումներ ունեցավ նաեւ ԻԻՀ նախագահի առաջին տեղակալ էսհաղ Ջահանգիրիի, Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ:Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ ստորագրվեցին նաեւ մի շարք համաձայնագրեր:

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը եւ Իրանի առաջին փոխնախագահ էսհաղ Ջահանգիրին, հանդիպումից հետո, զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների համար հանդես եկան հայտարարություններով:

Կարեն Կարապետյանն այցելեց նաեւ «Արարատ» մարզական ակումբ, որտեղ նախատեսված է նրա հանդիպումը տեղի հայ համայնքի, այդ թվում՝ գործարար հատվածի ներկայացուցիչների հետ: Կարեն Կարապետյանն այցելեց նաեւ Թեհրանի հայկական Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 12-ին Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում ունեցավ Գրողների համահայկական 6-րդ համաժողովի մասնակից սփյուռքահայ հայագիր եւ օտարագիր գրողների հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

Նա սփյուռքի նախարարին ներկայացրեց հոկտեմբերի 8-12-ը Ծաղկաձորում կայացած համաժողովի արդյունքները՝ նշելով, որ անդրադարձ է կատարվել հայ գրականության արդի խնդիրներին:

Սփյուռքի նախարարը նշեց, որ հայկական մամուլն ակտիվորեն լուսաբանեց համաժողովի աշխատանքները, ինչն էլ հայ հասարակությանը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ սփյուռքահայ գրողներին եւ նրանց ստեղծագործությանը:

Նախարարը կարեւորեց նաեւ օտար լեզվով հայ գրականությունն ու միտքը աշխարհին ներկայացնելու հանգամանքը:

Սփյուռքի նախարարը հավելեց, որ հայ գրողներն են մտավորականության զարդը, քանի որ նրանք ոչ միայն ստեղծում են նոր գործեր, այլեւ մայրենի լեզվի կրողներն ու պահապաններն են օտար երկրներում:

Վրաստանում հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ, վրաց խորհրդարանի նախկին պատգամավոր Ժորա Սմխչյանն ընդգծեց, որ, սփյուռքի նախարարության հետ ակտիվ համագործակցության արդյունքում միությունը, կարողանում է արագ լուծել իր խնդիրները:

Քննարկվեցին առաջիկայում իրանահայ, վիրահայ, պոլսահայ գրողների օրերը Հայաստանում անցկացնելուն, ինչպես նաեւ երիտասարդ գրողների ընդլայնված խորհրդակցության կազմակերպմանը վերաբերող հարցեր:

Հանդիպման ավարտին սփյուռքի նախարարը գրողներին նվիրեց «Գրական Սփյուռք-2016» տարեգիրքը:

ՇՆՈՒՆԴՈՎ ԱԽԱԼՔԱԼԱՔՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 7-ին Հայաստանի Կինեմատոգրաֆիստների միության արտահերթ համագումարը միության նախագահի պաշտոնում ընտրվեց Հարություն Խաչատրյանին:

- Ես իմ ելույթներում նշել էի՝ ինչքան էլ միջամտեն, նախագահին ընտրելու են միայն կինեմատոգրաֆիստները: Նրանք գիտեն, որ կինոն այսօր կարիք ունի հոգածության եւ նոր ծրագրերի,- ասաց Խաչատրյանն ու շնորհակալություն հայտնեց բոլորին:

Նրա կարծիքով, 2017-ին պետք է շատ առաջ շարժվեն կինոյի ասպարեզում: Միության նորընտիր նախագահը որոշել է մեկ ամիս անց արտահերթ նիստ գումարել, քանի որ մինչ այժմ չեն եղել միասնական որոշված եւ հաստատված ծրագրեր:

- Մենք կաշխատենք լուրջ ծրագրերի ուղղությամբ: Կինեմատոգրաֆիստներով կորոշենք մեր ծրագրերն ու ստրատեգիան: Յուրաքանչյուրը պետք է ղեկավարի իրեն հետաքրքրող ասպարեզը, որպեսզի կասկած չունենանք, որ ճիշտ ենք առաջ շարժվում,- նշեց Խաչատրյանն ու հավելեց, որ կինոյի ասպարեզն ամենակարեւոր գործիքներից մեկն է աշխարհի եւ մարդկանց հետ շփվելու համար:

«Վրաստան» թերթը ի սրտե շնորհավորում է մեր հայրենակից Հարություն Խաչատրյանին ստեղծագործական միության նախագահի ընտրվելու առիթով:

ԽՆՁՈՐԵՍԿՈՒՄ ՆՇՎԵՑ «ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕՐԸ»

Հոկտեմբերի 7-ին աշխատանքային այցով Սյունիք այցելած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց մարզում առաջին անգամ անցկացվող «Սպարապետի օրվան» նվիրված միջոցառումներին:

Միջոցառումների շրջանակներում, Սերժ Սարգսյանը այցելեց Խնձորեսկ համայնքում գտնվող Մխիթար Սպարապետի գերեզմանին, ծաղիկներ դրեց եւ հարգանքի տուրք մատուցեց Սպարապետի հիշատակին, իսկ երեկոյան ներկա գտնվեց օրվա խորհրդի ներքո կազմակերպված գալա համերգին:

Խնձորեսկում Սպարապետի օրվան նվիրված բազմաբնույթ միջոցառումներն ուղեկցվեցին ժողովրդական տոնախմբությամբ, երգ ու պարով, ավանդական տարբեր սպորտաձեւերում մրցույթներով:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Էնդրյու Շեֆերին (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:

Զրուցակիցները քննարկեցին ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու հնարավորությունները, այդ թվում՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման կազմակերպման վերաբերյալ հարցերը, անդրադարձել՝ ղարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակին: Հանդիպման մասնակիցները կարեւորեցին կողմերի հավատարմությունը հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանձնառություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ

Նյու Յորքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, INSEAD գործարարության դպրոցի եւ Քորնել համալսարանի կողմից անցկացված «Գլոբալ նորարարության ինդեքս-2017» նորարարության ոլորտի առաջատար փորձագետների, ակադեմիական շրջանակների, ՄԱԿ-ի անդամ-երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած միջոցառմանը քննարկվել են նորարարության դերը՝ տնտեսական աճ եւ կայուն զարգացում խթանելու առումով:

«Գլոբալ նորարարության ինդեքս-2017» վարկանիշավորման համաձայն, Հայաստանն ընդգրկվում է «նորարարական նվաճում արձանագրող» երկրների խմբում, որտեղ ներկայացված է թվով 17 զարգացող երկիր՝ նորարարության արդյունավետության եւ կատարողականի բարձր ցուցանիշներով:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(13 հոկտեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	480,00	483,00
ԵՎՐՈ	567,00	573,00
ՌՈՒԲԼԻ	8,28	8,41

Հոկտեմբերի 6-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 2,7 դրամով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

16.10.2017. Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Թաթուլ եւ Վարոս, Թումաս, Անտոն, Կրոնիդես սուրբ հայրերի եւ յոթ խոտաճարակների օր

Սուրբ Գրիգորիս Հայրապետը Վրթանես կաթողիկոսի ավագ որդին էր: Ըստ Փավստոս Բուզանդի, Սուրբ Գրիգորիսը եղել է Աղվանքի եւ Վիրքի կաթողիկոսը, նորոգել ու բարեկարգել՝ բոլոր եկեղեցիները:

Ըստ ավանդության, նա թաղված է Արցախի Ամարաս գյուղի Սուրբ Գրիգորիս եկեղեցում:

17.10.2017. Սուրբ առաքյալներ Անանիայի, Մատաթիայի, Բառնաբասի, Փիլիպոսի, Հովհաննեսի եւ Շիղայի՝ Սիղվանոսի հիշատակության օր

19.10.2017. Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացու, Տիմոթեոս եւ Տիտոս առաքյալների հիշատակության օր

ՓԱՌԱՏՈՆ

«ԳՈՒԴԱ» ՊԱՆԻՐԸ՝ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ

«Գուդա» պանիրը պատրաստվում է ոչխարի կամ կովի կաթից կամ դրանց խառնուրդից, առնվազն 60 օր պահվում է ոչխարի կամ հորթի կաշվից պատրաստված պարկում:

Վրաստանի բարձրալեռ Թուշեթիի երկրամասի ֆերմեր Կախա Աբուլաձեն հաղթող ճանաչվեց իտալական Բրա քաղաքում անցկացված պանրի The State of the raw milk փառատոնին:

Փառատոնի ժյուրիին 22-ամյա ֆերմերը ներկայացրեց Թուշեթիի ավանդական «Գուդա» պանիրը, որը պատրաստվել էր նրա «Ալազնիս թավի» գյուղատնտեսական կոոպերատիվում:

Նշենք, որ Թուշեթիի «Գուդա» պանիրը ներառված է Slow Food կազմակերպության «Ճաշակի տապան» էլեկտրոնային ցուցակում, որտեղ ներկայացված է նաեւ ողջ մոլորակի մոռացության մատնված սննդամթերքը: Նշենք, որ պանրի վերոնշյալ փառատոնը եւս կազմակերպվել էր այդ կազմակերպության կողմից:

2015 թվականին հիմնված «Ալազնիս թավի» կոոպերատիվը գործում է ծովի մակերեւույթից 2010 մետր բարձրության վրա: Ներկա դրությամբ, կոոպերատիվը թողարկում է ոչխարի կաթից պատրաստված «Սվիլոբի», կովի կաթից պատրաստված «Լարտուշո» պանիրները, խառը կաթից պատրաստված «Դովնա» եւ «Չոգի» գուդա պանիրը:

Նշենք, որ փառատոնի այս տարվա հաղթողներ են դարձել նաեւ Իտալիայի, ԱՄՆ-ի եւ Կոբա Վերդի Հանրապետության ֆերմերները:

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

«TBILISI SEA PLAZA» ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի մայրաքաղաքի Վազիսուբանի թաղամասի տարածքում բացվել է Հարավային Կովկասում խոշորագույն «TBILISI SEA PLAZA» կենտրոնը: 150 միլիոն ներդրումային գումարով կառուցված առեւտրական կենտրոնում տեղ են գտել շուրջ 400 տարբեր խանութներ: Բացի այդ, օբյեկտը օգտագործվելու է նաեւ որպես եվրասիական տարածաշրջանում դիստրիբյուտորական կենտրոն:

«TBILISI SEA PLAZA» առեւտրական կենտրոնի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր ու օրենսդիր մարմինների ղեկավարներ, Թբիլիսիի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, հիմնական ներդրումներ իրականացրած չինական ընկերության ղեկավարներ:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՇԽԱՐՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՆՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ

Հայտնի դարձան ֆուտբոլի աշխարհի 2018 թվականի առաջնության եզրափակիչ փուլի մասնակից հավաքականները:

Այդ փուլին մասնակցության ուղեգրի արժանացան նախընտրական փուլի եվրոպական ինը խմբերի հաղթողներ Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Գերմանիայի, Սերբիայի, Լեհաստանի, Անգլիայի, Իսպանիայի, Բելգիայի եւ Իսլանդիայի հավաքականները: Անցումային 2-ական հանդիպումներ կանցկացնեն եվրոպական A, B, C, D, E, G, H, I խմբերի 2-րդ տեղը զբաղեցրած Շվեդիայի, Շվեյցարիայի, Հյուսիսային Իռլանդիայի, Իռլանդիայի, Դանիայի, Իտալիայի, Հունաստանի եւ Խորվաթիայի հավաքականները: F խմբում վատագույն 2-րդ տեղի արդյունքով մրցաշարից դուրս մնաց Սլովակիայի ընտրանին:

Ինչ վերաբերում է Վրաստանի եւ Հայաստանի հավաքականներին, ապա D եւ E խմբերում հանդես եկող այդ թիմերը, տասը հանդիպումներում հավաքելով համապատասխանաբար 5 եւ 7 միավոր, իրենց խմբերում զբաղեցրին նախավերջին հորիզոնականն ու դուրս մնացին հետագա պայքարից:

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ D ԴԻՎԻԶԻՈՆՈՒՄ

Ազգերի լիգայի դասակարգման արդյունքում, Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմերը հայտնվել են D դիվիզիոնում:

Այդ դիվիզիոնում են նաեւ Մակեդոնիան, Ադրբեջանը, Ֆարերյան կղզիները, Բելառուսը, Ղազախստանը, Լյուքսեմբուրգը, Լիխտենշտեյնը, Լատվիան, Մոլդովան, Ջիբրալթարը, Սան Մարինոն, Անդորրան, Կոսովոն եւ Մալթան: Այս դիվիզիոնում կլինեն 4 խումբ՝ 4-ական թիմով:

Ազգերի լիգայի վիճակահանությունը կկայանա հունվարի 24-ին, Շվեյցարիայում:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Փարիզում 1898-1949 թթ. հրատարակված հայկական գրական ամսագիր: 5.Տղամարդկային, ջլուտ, մկանուտ: 9.Տատիկի ուսերին գցվածը: 11.Գետ Ռուսաստանում: 12.Շիրազի որդին, քանդակագործ ... Շիրազ: 13.Կծու (Ժող.): 14.Ներքին օրգան: 15.Բանտ, բերդ-ամրոց Թբիլիսիում: 16.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված գրող, թատերագիր, թարգմանիչ ... Ավչյան: 17.Հայկական ֆիլմ: 20.Հովհ.Թումանյանի հեքիաթներից՝ «... ու ծառան»: 21.Նար-Դոսի նովելաշարքի հերոսուհի: 22.Թթված գինի: 24.Ժխտական նախածանց: 25.Անձնական դերանուն: 27.Հայաշատ քաղաք ԱՄՆ-ում: 29.Հայկական ներկ՝ ... կարմիր: 32.Մխիթար Գոշի հիմնադրած եկեղեցին՝ Նոր ... կամ Գոշավանք: 34.Կտավներ ստեղծող: 35.Դեմքի մաս: 37.Հարցական դերանուն: 38.Հերոսուհի Շիրվանզադեի «Նամուս» դրամայում: 39.Վանքային համալիր Հայաստանի Արարատի մարզում՝ Խոր ...: 41.Մեղեդի, երաժշտություն: 46.Որմ, քարե շարվածք: 47.Ասիական պետություն: 48.Սասունցի Դավթի հորեղբայրը: 49.Հայկական գինի: 50.Քաջ, անվախ: 51.Թունավոր օձ: 52.«...ն՝ անտառում, հավքը՝ բնում, ձուկը ջրում չեն վաճառում» (առակ): 53.Պեպոյի «հաղթաթուղթը»:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գ.Էմինի գովերգած գյուղը: 2.Համադասական շաղկապ: 3.Գյուղ Վրաստանի Ախալքալաքիի շրջանում: 4.Դորպատ՝ այսօր: 6.Մեծ եղեռնի զոհ, արեւմտահայ բանաստեղծ ... Սեւակ: 7.Հանրահայտ դերասան ... Ջիգարխանյան: 8.Հայտնի նկարչուհի ... Կալենց, լիբանանահայ նկարիչ Հ.Կալենցի կինը: 10.Վրաց թագուհի, Վարդան Մամիկոնյանի դուստրը: 12.ԽՍՀՄ հերոս, «Փառքի» երեք աստիճանի շքանշանի ասպետ ... Տեր-Օգանով: 15.Նուրբ գործվածքի տեսակ: 17.Հայֆիլմ, որի երաժշտությունը գրել է աշխարհահռչակ կոմպոզիտոր Ա.Խաչատրյանը: 18.Հայ մեծ վիպասան: 19.Լարային նվագարան: 23.Քաղաք Ուկրաինայում: 26.Հարյուր տարի: 28.Արքայանիստ քաղաք, մայրաքաղաք: 30.5-6-րդ դդ. ապրած հայ մշակույթի գործիչ, «Սահմանք իմաստության» երկի հեղինակ ... Անհաղթ: 31.Թբիլիսահայ երգիչ, Եվրատեսիլին Վրաստանը ներկայացնող ... Քոչարով: 33.Քաղաք Ֆրանսիայում: 36.Գետ Վրաստանում: 40.Ն.Զարյանի «Պարոն ... ու իր նախարարները» վեպը: 42.Կ.Պոլսում 1884-1888 թթ. լույս տեսած երգիծական թերթ: 43.Ազգային հագուստ: 44.Ոչ թունավոր օձ: 45.Ոխ, քեն: 46.Հայ մեծ բարերար ... Նուբար: 51.Փոքրացուցիչ մասնիկ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Շմիդտ: 7.Արտաշես: 9.Աջարիա: 10.Անհավատ: 13.Ցիտատ: 14.Վուհադի: 18.Վինոկուր: 19.Երամակ: 22.Աղապակաս: 26.Եթեր: 27.Պողոտա: 28.Աբել: 31.Դիադեմա: 33.Աբեբա: 36.Կատարում: 38.Թարթառ: 41.Աձու: 42.Տնկի: 45.Ստել: 46.Բամբ: 49.Պիշ: 50.Ավիզ: 51.Ադանա: 52.Տնակ: 53.Կարս: 54.Տակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆրանց: 2.Տաբատ: 3.Լեգատ: 5.Մրջյուն: 6.Դերձակ: 8.Նախիր: 11.Հինա: 12.Վանա: 14.Վիշապ: 15.Հոտաղ: 16.Դուկատ: 17.Լեգենդ: 20.Մուրադ: 21.Կախեմ: 23.Պոչատ: 24.Կոկեր: 25.Սադամ: 29.Բերած: 30.Լակ: 32.Իմաստուն: 34.Բախտ: 35.Բուրկինա: 37.Այժմ: 39.Թալակ: 40.Ռուբիկ: 43.Նպատ: 44.Իշակ: 47.Ազա: 48.Բաս:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445